ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 23.12.2021թ. N «ԴԴ-ՀՄԱՊՁԲ-21/01» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» դեկտեմբերի 2021թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ա. Հարությունյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՄԱՅՆԻՆԳ ՓԱՐԹՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մխիթարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 23.12.2021թ. կնքված N «ԴԴ-ՀՄԱՊՁԲ-21/01» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման անհրաժեշտությունը.

1.1 Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում «Ժամկետը» սյունակում նշված «10 օրացուցային օր» բառերը փոխարինել «մինչև 28.12.2021թ. ներառյալ» բառերով:

1.2 Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի և Պայմանագրի պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո՝ 23.12.2021թ.-ից մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Վաճառողի կողմից մատակարարված ապրանքի դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ՄԱՅՆԻՆԳ ՓԱՐԹՍ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Ազատության պ./շ/9ա/38 բն.
ՀՎՀՀ՝ 02583241	Հ/Հ՝ 1570073895450200
Հ/Հ՝ 900011025757	ՀՎՀՀ՝ 00235689
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Ղեկավար՝ Ա. Հարությունյան	Տնօրեն՝ Մ. Մխիթարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	

Հավելված N 1
« 27 » «12» 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 23 » « 12 » 2021թ. կնքված
N «ԴԴ-ՀՄԱՊՁԲ-21/01» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	
			դեկտեմբեր	Ընդամենը
1	44621160/502	Կենտրոնացված ջեռուցման կաթսա	2 100 000	**2 100 000**

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«ՄԱՅՆԻՆԳ ՓԱՐԹՍ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ազատության պ./շ/9ա/38 բն.
Հ/Հ՝ 1570073895450200
ՀՎՀՀ՝ 00235689
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն՝ Մ. Մխիթարյան

/ստորագրություն/